**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
26 հունիսի 2026 թվականի N 954-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳԱՆՁԱԿ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԴԱՎԻԹ ՀՐԱՉԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 29.04.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026YLEPCL ծածկագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22082017-05-0022 վկայականը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.056 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք գյուղ Գանձակ Տ. Պետրոսյան փողոց 1 հասցեում 2014-2021թթ. ինքնակամ կառուցված 228.4 քմ արտաքին /195.8 քմ ներքին/ մակերեսով սրահը, 114.2 քմ արտաքին /96.3 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, 2.9 քմ արտաքին /1.5 քմ

ներքին/ մակերեսով սանհանգույցը և 0.5 քմ մակերեսով պարիսպը՝ 1 /մեկ/ քառակուսի մետրի համար 2056 /երկու հազար հիսունվեց/ ՀՀ դրամ, ընդամենը 346.0x2056=711400 /յոթ հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. 2025թ. ինքնակամ կառուցված 7.8 քմ մակերեսով սրահը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողատեսքից փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 26
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
29 հունիսի 2026 թվականի N 955-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ՄՈՎՍԵՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԿՈՒՂՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 912-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19082020-05-0038 վկայականը, որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 21.04.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026ZWCXWU ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Գավառ քաղաքի Մովսեսյան փողոց թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը և նկատի ունենալով, որ նկուղը գտնվում է Գավառ քաղաքի Մովսեսյան փողոց 1 շենքի սպասարկման համար նախատեսված հողամասում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ղեկավարի 16 հունիսի 2026 թվականի N 912-Ա որոշումը:

2. Գավառ քաղաքի Մովսեսյան փողոց 1 շենքի 3 բնակարանին կից 2000թ. ինքնակամ կառուցված 7.8 քմ մակերեսով նկուղը՝ 1 (մեկ) քառակուսի մետրի համար 362.7 (երեք հարյուր վաթսուներկու ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ, ընդամենը 7.8x362.7=2900 (երկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ; 2020թ. ինքնակամ բացված և փակված դռները՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ դռան համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը 2x1209=2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

3. 2023թ. ինքնակամ կառուցված 10.9 քմ մակերեսով կցակառույցը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 29
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
29 հունիսի 2026 թվականի N 956-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Ա. ԽՆԿՈՅԱՆ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՍՏԱՄ ՌԱՖԻԿԻ ՔԻՇՈՅԱՆԻ, ՀԵՐԻՔ ՍԻՍԱԿԻ ՔԻՇՈՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՌՈՒՍՏԱՄԻ ՔԻՇՈՅԱՆԻ, ԱՐՄԻՆԵ ՌՈՒՍՏԱՄԻ ՔԻՇՈՅԱՆԻ, ՌԱՖԱՅԵԼ ՌՈՒՍՏԱՄԻ ՔԻՇՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, 26 դեկտեմբերի 2002թ-ի N 510-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 15.06.2026թ. տրված Սարուխան համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 10.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 20264JVFAX ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Սարուխան Ա. Խնկոյան փողոց 13 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.20524 հա, որը Ռուստամ Ռաֆիկի Քիշոյանին /ծնված 23.06.1957թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ

օրինական կառուցված 253.20 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1982-2020թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.20524 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Սարուխան Ա. Խնկոյան փողոց 13 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռուստամ Ռաֆիկի Քիշոյանի /ծնված 23.06.1957թ-ին/, Հերիք Սիսակի Քիշոյանի /ծնված 02.01.1956թ-ին/, Հասմիկ Ռուստամի Քիշոյանի /ծնված 28.07.1982թ-ին/, Արմինե Ռուստամի Քիշոյանի /ծնված 15.05.1984թ-ին/, Ռաֆայել Ռուստամի Քիշոյանի /ծնված 14.11.1989թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.11 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.09524 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.20524 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 209.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1982-1995թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2015-2020թթ-ին ինքնակամ կառուցված 33.7 քմ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը 33.7x1028=34700 /երեսունչորս հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ և 9.8 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 616.8 /վեց հարյուր տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը 9.8x616.8=6100 /վեց հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:
3. 2015թ. ինքնակամ կառուցված 48.9 քմ մակերեսով անավարտ ավտոտնակը և 2020թ. ինքնակամ կառուցված 16.7 քմ մակերեսով ծածկը ճանաչել որպես ինքնակամ շինություններ:
4. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ա. Խնկոյան փողոց, 13 հասցեն:
5. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:
7. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
8. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 29
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
30 հունիսի 2026 թվականի N 957-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Գ. ԼՃԱՓ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 9/2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ, ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 141-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Թելման Նորիկի Նիկողոսյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնաշենքը և անավարտ շինությունը օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 03062026-05-0037, տրված 03.06.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնք գ. Լճափ 3-րդ փողոց 9/2 բնակելի տուն հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 191.50 քմ արտաքին /154.20 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը, 81.50 քմ արտաքին /62.70 քմ ներքին/ մակերեսով անասնաշենքը և 45.0 քմ արտաքին /36.40 քմ ներքին/ մակերեսով անավարտ շինությունը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.1 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար բնակելի տան 1/մեկ/ քառակուսի մետրի համար 2622 / երկու հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 502200 /հինգ հարյուր երկու հազար երկու հարյուր / ՀՀ դրամ, անասնաշենքի և անավարտ շինության 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1748 /մեկ հազար յոթ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 221200 /երկու

հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, բնակելի տան, անասնաշենքի և անավարտ շինության համար առանձնացված 0.1 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 514.8 /հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ / ՀՀ դրամ, ընդամենը 514800 /հինգ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Թելման Նորիկի Նիկողոսյանին :

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Թելման Նորիկի Նիկողոսյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
30 հունիսի 2026 թվականի N 958-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 35/2 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 135-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Ալֆրեդ Աբրահամի Ժամհարյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 13052026-05-0066, տրված 13.05.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնք ք. Գավառ Ազատության փողոց 35/2 հողամաս հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 12.63 քմ արտաքին /10.30 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00796 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 / մեկ հազար երկու հարյուր ինը / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 15300 /տասնհինգ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00796 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1221 / մեկ հազար երկու հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ, ընդամենը 97200 / իննսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման

համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Ալֆրեդ Աբրահամի Ժամհարյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Ալֆրեդ Աբրահամի Ժամհարյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 30
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 959-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 50 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 136-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Սոնյա Սերգեյի Զաքոյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 08052026-05-0036, տրված 08.05.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնք ք. Գավառ Ազատության փողոց 1-ին նրբանցքի 2-րդ փակուղի 50 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 54.9 քմ արտաքին /47.1 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00312 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 874 / ութ հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 48000 /քառասունութ հազար / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00312 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 514.8 / հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ / ՀՀ դրամ, ընդամենը 16100 / տասնվեց հազար մեկ հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման

համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Սոնյա Սերգեյի Զաքոյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Սոնյա Սերգեյի Զաքոյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 960-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 14/63 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 137-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Գառնիկ Սաշայի Կևեյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 25052026-05-0069, տրված 25.05.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 14/63 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 21.20 քմ արտաքին /19.50 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00212 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1422 / մեկ հազար չորս հարյուր քսաներկու / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 30200 /երեսուն հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00212 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1877.7 / մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ / ՀՀ դրամ, ընդամենը 39900 / երեսունինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական

գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Գառնիկ Սաշայի Կևեյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Գառնիկ Սաշայի Կևեյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 961-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ Գ. ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 6/1 ՀԱՍՑԵԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՄԿՐՏՉԻ ՀՈՎԵՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 24.11. 1996թ-ի «Հայջրտնտ» ՀՆՊՁ Սևանի ավազանի դուստր ձեռնակության N 8 Կարգադրությունը և վճարման անդորրագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որոնց համաձայն Գավառ քաղաք Գ. Պետրովի փողոց 2-րդ նրբանցք 6/1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-001-0372-0010/ և հաշվի առնելով, որ 1994թ-ին օրինական կառուցված 30.4 քմ մակերեսով օժանդակ շինության կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00664 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաք Գ. Պետրովի փողոց 2-րդ նրբանցք 6/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Աշոտ Մկրտչի Հովեյանի /ծնված 25.09.1957թ-ին/ հողօգտագործման իրավունքը, օժանդակ շինության կառուցման և սպասարկման

համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1994թ-ին օրինական կառուցված 30.4 քմ մակերեսով օժանդակ շինության կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.00664 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Գ. Պետրովի փողոց, 2-րդ նրբանցք, 6/1 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 962-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 9/71 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 139-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Գագիկ Հենրիկի Մանուկյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 21052026-05-0096, տրված 21.05.2026թ./, որոշում եմ

1.Գավառ համայնք ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց 9/71 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 38.40 քմ արտաքին /33 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00384 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 / մեկ հազար երկու հարյուր ինը / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 46500 /քառասունվեց հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00384 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1221 / մեկ հազար երկու հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ, ընդամենը 46900 / քառասունվեց հազար ինը հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման

համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Գագիկ Հենրիկի Մանուկյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Գագիկ Հենրիկի Մանուկյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 963-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, դեռևս վարձակալությամբ չտրված գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու նպատակով 2026 թվականի հուլիսի 02-ին հայտարարել մրցույթ:
2.Հանձնարարել մրցութային հանձնաժողովին օրենքով սահմանված կարգով հայտարարել և կազմակերպել մրցույթը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 964-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Զ. ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ԱՐԵՎԵԼՔ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 9 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 896-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 01.07.2026թ N Կ-01072026-05-0080 որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի 9 հունիսի 2026 թվականի N 896-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ղեկավարի 9 հունիսի 2026 թվականի N 896-Ա որոշման 1-ին կետում /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00347 հա/ մակերսով բառերի փոխարեն կարդալ՝ /համայնքային սեփականություն հանդիսացող 0.0036 հա/ մակերեսով բառերը:

2. Գավառ համայնքի ղեկավարի 9 հունիսի 2026 թվականի N 896-Ա որոշման 2-րդ կետում /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00347 հա/ մակերսով բառերի փոխարեն կարդալ՝ /համայնքային սեփականություն հանդիսացող 0.0036 հա/ մակերեսով բառերը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 965-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 44 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՄԱՆ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ԲԱԴԵՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.04869 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին, թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 13.05.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը և Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 44 հասցեի գույքի համասեփականատեր Ռոման Լերմոնտովի Բադեյանի /ծնված 20.12.1968թ-ին/ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 44 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է /ծածկագիր՝ 05-001-0083-0003/, հատկացվել է 0.14 հա, ինչը փաստացի կազմում է 0.21669 հա, որից 0.16800 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Ռոման Լերմոնտովի Բադեյանին /ծնված 20.12.1968թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել օգտագործվող 0.04869 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 154.5 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի գույքի համասեփականատեր Ռոման Լերմոնտովի Բադեյանին /ծնված 20.12.1968թ-ին/ և հաշվի

առնելով, որ օրինական կառուցված 77.2 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1985թ-ին/ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.21669 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 44 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռոման Լերմոնտովի Բադեյանի /ծնված 20.12.1968թ-ին/, Ռուզաննա Ռազմիկի Ավագյանի /ծնված 12.02.1969թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.14 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02800 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.16800 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 77.2 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1985թ-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 44 հասցեում գտնվող 0.16800 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0.04869 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց, 44/1 հասցեն և ուղղակի վաճառքի կարգով օտարել Ռոման Լերմոնտովի Բադեյանին /ծնված 20.12.1968թ-ին/, Ռուզաննա Ռազմիկի Ավագյանին /ծնված 12.02.1969թ-ին/ հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 154.5 /մեկ հարյուր հիսունչորս ամբողջ հինգ տասնորդական/ ՀՀ դրամ՝ ընդամենը 486.9x154.5=75300 /յոթանասունհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:

3. Բնակելի տանը տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց, 44 հասցեն:

4. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Ռոման Լերմոնտովի Բադեյանի /ծնված 20.12.1968թ-ին/, Ռուզաննա Ռազմիկի Ավագյանի /ծնված 12.02.1969թ-ին/ հետ կնքելու 0.04869 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 966-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ԱՐԵՎՄՏՔ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, ՀՀ Կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն որոշման հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 18.09.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 202333USGA ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արտուշ Սամվելի Բոշյանի դիմումը՝ Գավառ համայնքի Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքից արևմուտք ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 21,50 քմ. արտաքին /20,50 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.0028

հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.0028 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 21,50 քմ. արտաքին /20,50 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2.Գավառ համայնքի Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.0028 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 21,50 քմ. արտաքին /20,50 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք թիվ 32 հասցեն:

5.Օրինականացված 21,50 քմ. արտաքին /20,50 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Արտուշ Սամվելի Բոշյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
01 հուլիսի 2026 թվականի N 967-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 1/2 ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15 հունիսի 2026 թվականի թիվ 6 նիստի թիվ 140-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Մարինե Մեխակի Սարգսյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 02062026-05-0053, տրված 02.06.2026թ./, ***որոշում եմ***

1.Գավառ համայնք ք. Գավառ Զոհված Ազատամարտիկների փողոց 2-րդ նրբանցք 1/2 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 36.20 քմ արտաքին /34.20 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, ավտոտնակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0. 00362 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար ավտոտնակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 / մեկ հազար երկու հարյուր ինը / ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 43800 /քառասուներեք հազար ութ հարյուր / ՀՀ դրամ, ավտոտնակի համար առանձնացված 0.00362 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1221 / մեկ հազար երկու հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ, ընդամենը 44300 / քառասունչորս հազար երեք հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների

պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Մարինե Մեխակի Սարգսյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Մարինե Մեխակի Սարգսյանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 01
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
02 հուլիսի 2026 թվականի N 968-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՍ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 76 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի 1920-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 02 ապրիլի 2015թ. 412-Ն որոշման 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27102025-05-0055 վկայականը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 12.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026QAWMXY ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք գյուղ Նորատուս Սևանի փողոց 76 հասցեում ինքնակամ բացված դուռը, դռան ձևափոխված պատուհանը և պատուհանի ձևափոխված դուռը՝ յուրաքանչյուր 1 /մեկ/ դռան և /մեկ/ պատուհանի համար 1028 /մեկ հազար քսանութ/

ՀՀ դրամ, ընդամենը 3x1028=3100 /երեք հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Միավորված շինության 37.3 քմ մակերեսի գործառնական նշանակությունը՝ առանց նախագծային փաստաթղթերի փոփոխության, բնակելի տնից փոխել ատամնաբուժարանի:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 02
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
02 հուլիսի 2026 թվականի N 969-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Զ. ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ՀՅՈՒՍԻՍ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 7 ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 803-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 21.05.2026թ N Կ-21052026-05-0036 որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի 7 մայիսի 2026 թվականի N 803-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ղեկավարի 7 մայիսի 2026 թվականի N 803-Ա որոշման 1-ին կետում /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00473 հա/ մակերսով բառերի փոխարեն կարդալ՝ /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00517 հա/ մակերեսով բառերը:
2. Գավառ համայնքի ղեկավարի 7 մայիսի 2026 թվականի N 803-Ա որոշման 2-րդ կետում /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00473 հա/ մակերսով բառերի փոխարեն կարդալ՝ /համայնքային սեփականություն հանդիսացող 0.00517 հա/ մակերեսով բառերը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 02
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
02 հուլիսի 2026 թվականի N 970-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՄԱՐՏԻ 2019 թ-ի ԹԻՎ 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ո***րոշում եմ***

1. Գավառ համայնքի ղեկավարի 01 մարտի 2019թ-ի թիվ 41-Ա որոշման նկարագրական մասում «խանութը օրինականացնելու և» բառակապակցությունից հետո գրված «208.2» թվերը փոխարինել «191.4» թվերով:

2. Գավառ համայնքի ղեկավարի 01 մարտի 2019թ-ի թիվ 41-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերում «համայնքային սեփականություն հանդիսացող» բառակապակցությունից հետո գրված «0.02082» թվերը փոխարինել «0.01914» թվերով:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 02
ք. Գավառ